ՊԱՇՏՈՆ	SS գլխավոր բիզնես վերլուծաբան
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ	Հուլիսի 17 , 2025թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	Օգոստոսի 17, 2025թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու և բարձր որակավորում ունեցող Բիզնես վերլուծաբանի Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությանը միանալու նպատակով, ով պատասխանատու է լինելու ստորև գործառույթների իրականացնելու համար.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ուսումնասիրում է SS համակարգերի նկատմամբ բիզնես ստորաբաժանումների կողմից ներկայացված պահանջները, կատարում է վերլուծություն այդ պահանջների իրագործելիության, առկա ծրագրային համակարգերի և լուծումների հետ համահունչ լինելու մասով
- Կազմում և գործընկեր կազմակերպություններին իրագործման է ներկայացնում տեխնիկական առաջադրանքներ, վարում է դրանց իրագործման հետ կապված ողջ հաղորդակցությունը, ընդունում, թեսթավորում և շահագործման է հանձնում ծրագրային լուծումները
- Ըստ անհրաժեշտության կարող է կազմել ուղեցույցներ և ձեռնարկներ
- Աջակցում է համակարգերի ադմինիստրատորներին ծրագրային խնդիրների վերլուծության և իրավիճակային լուծումների մասով
- Կատարում է բիզնես վերլուծություն և գործավարության վերլուծություն՝ նպատակներին հասնելու, առկա դժվարությունները գնահատելու և ավելի լավ մոտեցումներ սահմանելու համար
- Մասնակցում է ստորաբաժանման աշխատանքների պլանավորմանը և կազմակերպմանը
- Ներկայացնում է ստորաբաժանման աշխատանքի բարելավմանը ուղղված առաջարկներ
- SS համակարգերի և Բիզնես գործընթացների ավտոմատացման հնարավորության գնահատում և վերլուծում

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Վերահսկողական հմտությունների առկայություն
- Ֆինանսաբանկային ոլորտում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ

- Փաստաթղթերի գեներացման բազային իմացություն
- Գրավոր և բանավոր հաղորդակցման բարձր ունակություն՝ներառյալ տեխնիկական փաստաթղթերի վարման ունակություն
- ԼՍՈՖԹ-Բանկ համակարգի իմացություն
- MS Office փաթեթի գերազանց իմացություն
- Հայերենի գերազանց իմացություն, ռուսերենի և անգլերենի իմացություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում
- Վերլուծական հմտություններ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/163 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/